ԴԱՄ, պ. դէմ, անգամ, անկէ հէր դէմ, ամէն անգամ, միշտ. «Ջուապ կու տայ ինքն յամէն դամ.» 42, 55։

ԴԻԼՊԱՐ, պ. դիլպէր, հմայիչ, սրտագրաւ, գեղեցիկ. «դիլպար բըլպուլն հետ ծաղկընուն.» 40, 9։

ԴՈՒՂԱՑ, ա. դուա, աղօթք, իղձք, մաղթանք, ողջոյն. այսօր ալ վանեցւոց բերանը կ'արտաբերուի դուղայ. «սալամ տուղայ տարան վարդին». 40, 16։

ԴՈՒՐ, դասականի դուլ եւ դադարը. «չառնեմ դուր եւ դադար ի մէջ գիշերին». 32, 50։

ԴՈՒՐԱՆԱԼ, մեղմիլ. 38, 35։

ԴՐՈՒՑ. (ի դրուց), դրսէն. «Հաւ ղումրին երեկ ի դրուց.» 41. 33։

ԵՂԵԳՆԱԽՈՒՆԿ, խունկեղեգն. 63, 6։

ԵՐԳԵՀՈՆ, 74, 76։

ԵՐԵՐՈՒՄՆ, յերերմանի. 41, 39։

ԵՐՓՆԱԶԱՐԴ, գունազարդ. 29, 53։

ԶԱՐ, պ. զար. ողբ, հեծեծանք, լաց. «Զար եւ ֆիղան կանչեմ.» 31, 22։

ԶԵՐԴ, ԶԵՐԹ, իբրեւ, որպէս. 35, 106. 76։

ԶԸՆԴԱՆ, բանտ. 69։

ԶՈՒԼԱԼ, ա. զուլալ. ջինջ ջուր. ջուր կենաց. աղբիւր անմահութեան. 63, 3։

ԶՈՒՐՈՒՑՆԱՄ, խօսիմ. 60, 39։

ԶՕՐԵՄ, զդէմ ունել, յաղթել. 72, 29։

ԸՌՔԷՊ, ա. րէքապ (رکب), ասպատան. «զերծաւ կօշիկդ ի յըռքէպէ». 69, 8։

ԹԱԴՊԻՐ, ա. թէտպիր. ճար, միջոց. հնարք. թէտպիր էթմէք, ճար ընել, հնարք ի գործ դնել. «դու քեզ ասա արա թադպիր քեզի». 43, 77։